ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

19 հունիսի 2018 թվականի N 67-Ա

ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ և ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Սթոուն լենդ» ՍՊ ընկերության 2018 թվականի փետրվարի 20-ի թիվ 4 դիմումը, աշխատանքային փոփոխված նախագծի վերաբերյալ 2018թ մայիսի 22-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ-48 և 2018թ մարտի 16-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 623 փորձաքննությունների դրական եզրակացությունները, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի մայիսի 31-ի թիվ Ֆ-189/18 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊ ընկերությանը շահագործման տրամադրված ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի բազալտի հանքավայրի ընդերքի տեղամասից արդյունահանում կատարելու համար, թիվ ՇԱԹՎ-29/070 թույլտվության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 36 տարով, սահմանելով մինչև՝ 2068 թվականի հուլիսի 16-ը:

2) ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի բազալտի հանքավայրի 253758 հազար մ^3 մնացորդային պաշար ունեցող ընդերքի տեղամասը եզրագծված «1.X=4456380 Y=8467049, 2.X=4456402 Y=8467160, 3.X=4456441 Y=8467138, 4.X=4456465 Y=8467186, 5.X=4456533 Y=8467159, 6.X=4456534 Y=8467146, 7.X=4456481 Y=8467129, 8.X=4456532 Y=8466940, 9.X=4456584 Y=8466939, 10.X=4456591 Y=8466913, 11.X=4456506 Y=8466861» կոորդինատներով ընդլայնել տրամադրելով՝ 1.X=4456374 Y=8466676 2.X=4456540 Y=8466786 3.X=4456624 Y=8466752

4.X=4456532 Y=8467172 5.X=4456318 Y=8467260 6.X=4456317 Y=8466960 կոորդինատներով եզրագծված 11,7 հա տեղամասը (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) 2 055 650 հազար մ^3 մարվող պաշարով, և լեռնահատկացման թիվ ԼՎ-070 լեռնահատկացման ակտը՝ «1.X=4456371 Y=8467051, 2.X=4456393 Y=8467173, 3.X=4456437 Y=8467145, 4.X=4456462 Y=8467199, 5.X=4456532 Y=8467171, 6.X=4456534 Y=8467146, 7.X=4456481 Y=8467129, 8.X=4456532 Y=8466940, 9.X=4456584 Y=8466939. 10.X=4456595 Y=8466899, 11.X=4456503 Y=8466848» կոորդինատներով եզրագծված տեղամասն ընդալնել տրամադրելով՝ «1.X=4456370 Y=8466668 2.X=4456540 Y=8466780 3.X=4456628 Y=8466744 4.X=4456538 Y=8467176 5.X=4456310 Y=8467264 6.X=4456310 Y=8467150 7.X=4456156 Y=8467130 8.X=4456110 Y=8467100 9.X=4456290 Y=8466868 10.X=4456328 Y=8466878» (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 15.85 հա տեղամասը:

3). Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 41113 մ^3 մարվող պաշար:

2.Ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-070 պայմանագրում, լեռնահատկացման թիվ ԼՎ-070 ակտում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին:

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված փաստաթղթային տարբերակը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ